

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ (2022-2027 ԹԹ.)

Գործադիր ամփոփում

Հաշվի առնելով շահակիցների շրջանում մշակութային ոլորտի կարորության գիտակցումը՝ Սեւան համայնքի մշակութային զարգացման ռազմավարության մշակման նպատակը ոլորտում որոշում կայացնողների համար ռազմավարական ուղեցույցի ստեղծումն է, որը կներառվի համայնքի հնգամյա զարգացման պլանում:

Ռազմավարության միջոցով հնարավորություններ են ստեղծվել համայնքի մշակութային ներուժի ամբողջական բացահայտման ու վերաարժեւորման համար՝ ինչը ծառայելու է Սեւանի յուրաքանչյուր բնակչի կյանքի որակի բարելմանն ու համայնքի միջազգային հանրահռչակմանը:

ՄԶՌ հիմնական տեսլական է սահմանվել կայուն, պատասխանատու և ներառական մշակութային կյանքի առկայությունը Սեւան համայնքում:

Կայուն մշակութային կյանքն, առաջին հերթին, կարևոր է մշակութային ոլորտի զարգացման շնորհիվ համայնքի սոցիալ-տնտեսական կյանքի ակտիվացման, ինչպես նաև դրա շարունակականության ապահովման տեսանկյունից:

Մյուս կողմից, հաշվի առնելով էկոլոգիական հիմնախնդիրներն ու դրանց առանցքային դերը համայնքում, մեծ նշանակություն ունի մշակույթի միջոցով **պատասխանատու հասարակության** կերտման գործընթացը՝ ձեւավորելով համայնքում շրջակա միջավայրի հետ համակեցության օրինակելի մշակույթ՝ սկսած կենցաղավարությունից մինչև տնտեսական գործունեություն, ինչը օրինակ կծառայի նաև այլ համայնքների համար:

Իսկ **ներառական մշակութային կյանք** ունենալու տեսլականը կարեւորում է համայնքի բոլոր բնակավայրերում մշակութային կյանքի հասանելիություն յուրաքանչյուր բնակչին՝ անկախ հնարավոր մարտահրավերներից:

Ռազմավարությամբ սահմանվել են երեք հիմնարար նպատակներ՝

Ռազմավարական նպատակ 1. Առավելագույնս օգտագործել Սևան համայնքի մշակութային ներուժը՝ ի նպաստ համայնքի կայուն սոցիալ-տնտեսական զարգացման:

Ռազմավարական նպատակ 2. Սևանը դիրքավորել որպես մշակութային խաչմերուկ և միջմշակութային փոխգործակցության հարթակ

Ռազմավարական նպատակ 3. Սևանը հանրահռչակել որպես էկոկենցաղավարման և էկոտնտեսավարման մշակույթի ձևավորման և արտահանման համայնք

Այս ամենը կյանքի կոչելու համար, առանցքային նշանակություն ունի Սեւան համայնքի նյութական ու ոչ նյութական մշակութային ժառանգության, ինչպես նաև մարդկային ռեսուրսների ներուժի բացահայտումը՝ ամբողջական քարտեզագրման միջոցով, որի իրականացման հնարավորությունները սահմանվել են ռազմավարությամբ:

Հարուստ պատմամշակութային ժառանգության ամբողջական քարտեզագրման աշխատանքների արդյունքերը հիմք են դառնում ռազմավարությամբ սահմանված առեւտրայնացման մեխանիզմների ձեւավորման ու իրականացման համար, ինչի նպատակը համայնքի սոցիալ-տնտեսական միջավայրի բարելավումն է:

ՄԶՌ հաջորդ հիմնական ուղղությունն է համայնքում ազգային և միջազգային մշակութային իրադարձությունների կազմակերպման հայեցակարգերի մշակումն ու իրականացումը, որը հնարավորություն է տալու հանրահչակել Սեւանի մշակութային կարողությունները: Ընդ որում, այս ամենը զուգակցվում է մշակութային կյանքի ներառականության ու հասանելիության գաղափարախոսության հետ՝ համայնքում շարժական մշակույթի տարածման միջոցով:
Մշակութային զարգացման ռազմավարության առանցքը համայնքի բնակիչներն ու որոշում ընդունողներն են, որոնց կարողությունների ու հմտությունների զարգացումը համապատասխան վերապատաստումների ու վարպետության դասերի միջոցով մշակութային ոլորտի շարունակականության ապահովման հիմքն է դարձել:

Հակադրությունների և համակեցության համայնք

Սևան համայնքը ՀՀ Գեղարքունիքի մարզի 6 խոշորացված համայնքներից մեկն է, որտեղ ապրում է 43720 բնակիչ: Սևան համայնքը բաղկացած է Սևան քաղաքից և հարակից 11 գյուղական բնակավայրերից:

Համայնքի տարածքը մշտապես բնակեցված է արդեն ավելի քան 5000 տարի, ինչը վկայում են տարածքում գոյություն ունեցող հնավայրերն ու հուշարձանները: 1840-ական թվականներին տարածքը սկսեց բնակեցվել ռուսներով: Ցարական կառավարությունը 1830-ականներից բնակեցնում էր Անդրկովկասը և բնակավայրերին տալիս ռուսական անուններ՝ նպատակ ունենալով այդ շրջանում ամրապնդել իր հենարանը: Այսպես՝ համայնքի տարածքում առաջացան Չկալովկա, Սեմյոնովկա և Ելենովկա բնակավայրերը: Վերջինս 1935-ին վերանվանվեց Սևան, իսկ 1961-ին ստացավ քաղաքի կարգավիճակ: Համայնքի կազմի մեջ մտնող Գագարին բնակավայրը ստեղծվել է Խորհրդային տարիներին՝ որպես արդյունաբերական ավան:

Սևան համայնքը գտնվում է ծովի մակերևույթից 1890 (Զովաբեր)-2114(Սեմյոնովկա) մետր բարձրության վրա և զբաղեցնում է 392,7 քառ. կմ տարածք: 40 կիլոմետր երկարությամբ համայնքի ափերը ողողում են Սևանա լճի ջրերը, որը Հայկական լեռնաշխարհի բնության զարդերից է: Սևանա լիճը համարվում է երկրագնդի քաղցրահամ ջուր ունեցող 2-րդ բարձրադիր լիճը Հարավային Ամերիկայի Տիտիկակա լճից հետո:

Սևանին արտակարգ հմայք են տալիս շրջակա լեռները: Սևանա լիճը ներքին և միջազգային զբոսաշրջային ամենագրավիչ ուղղություններից մեկն է, ուր տարեկան այցելում է միջինում 300000 զբոսաշրջիկ՝ Սևանավանքը տեսնելու (9-րդ դ ճարտարապետական նշանավոր հուշարձան), լճի ափին վայելելու մաքուր ու թափանցիկ օդը, լճի խաղաղ ու հանդարտ ջրերը:

Համայնքն առանձնանում է բնական և ձեռակերտ հուշարձաններով և միջազգային նշանակության պատմամշակութային ժառանգությամբ: Տարածքով անցնում են միջպետական նշանակության ավտոմայրուղիներ, երկաթգիծ: Համայնքի տարածքում է գտնվում Նորաշենի արգելոցը (հայկական որորի բնակատեղին), Սևանի բուսաբանական այգին, ««Սևան» Ազգային պարկի» այցելուների կենտրոնը՝ տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի ցուցասրահով:

Առանձին ուշադրության է արժանի Լճաշենի հնավայրը՝ իր 6 միջնաբերդ ունեցող Կիկլոպյան ամրոցով, համաշխարհային նշանակության բրոնզեդարյան դամբարանադաշտերով ու վիշապաքարերով, Ուրարտական թագավոր Արգիշտի Ա-ի սեպագիր արձանագրությունով, միջնադարյան քրիստոնեական բազմաթիվ հուշարձաններով:

1949 թվականից շահագործվում է Սևանի ՀԷԿ-ը: Այն ԽՍՀՄ առաջին ստորգետնյա հիդրոէլեկտրակայանն է, հետաքրքիր ճարտարապետական կառույց է, ունի զբոսաշրջային մեծ գրավչություն:

1939թ-ից համայնքում լույս է տեսնում “Սևան” թերթը:

Քաղաքում ժամանակին գործել է 7 գրադարան, որոնք հետո կենտրոնացվեցին մեկ վայրում՝ քաղաքի մշակույթի տանը: Գրադարաններ գործում են նաև համայնքի կազմի մեջ մտնող գյուղական մի քանի բնակավայրերում: Ընթերցանության պահանջը երիտասարդներին մղում է նաև այլ նախաձեռնությունների՝ ստեղծել փոքրիկ գրադարաններ, միմյանց միջև գրքեր փոխանակել, կազմակերպել գրքի քննարկումներ: Այս ամենի համար հարթակ է տրամադրում "Բոհեմ" արվեստանոց-թեյարան սոցիալական ձեռնարկությունը, որը դարձել է քաղաքի մշակութային կյանքը ակտիվ պահող հիմնական կառույցը:
Իսկ "Տեսվան" ընկերությունը, որը երիտասարդների կողմից ստեղծված և մեծ թափով զարգացող SS ընկերություն է, նպատակ ունի իր միջոցներով համայնքում հիմնելու մեծ ու ժամանակակից գրադարան ու պարի դպրոց՝ հին Սևանի մշակութային ավանդույթները վերականգնելու նպատակով:
1974թ-ից քաղաքային մշակույթի տանը գործել է Սևանի ժողովրդական թատրոնը, որը հյուրախաղերով հանդես է եկել Խորհրդային Միության տարբեր քաղաքներում: Թատերական ավանդույթները վերականգնելու նպատակով այսօր լուրջ ջանքեր են ներդնում քաղաքում ապրող արվեստագետները:
Քաղաքի՝ հարուստ ավանդույթներ ունցող երաժշտական դպրոցը այսօր կրում է նախկին տնօրենի՝ կոմպոզիտոր Վալերի Սարգսյանի անունը, ում շնորհիվ համայնքում պահաջարկ է ձևավորված դասական և սիմֆոնիկ երաժշտության հանդեպ:
Համայնքը մեծ ներուժ ունի նաև քանդակագործության, գեղանկարչության ու ժամանակակից արվեստի ոլորտներում՝ շնորհիվ այստեղ ապրող և արարող արվեստագետների:
Սևանի պատմամշակութային ժառանգության, անցյալի և ներկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն դարեր ի վեր միավորել ու համախմբել է մշակույթի տարբեր ձևեր, եղել է օտար ազգիների հետ համերաշխ համակեցության, հանդուրժողականության ու մաքրակենցաղության օրինակելի վայր: Համայնքն ունի ապակենտրոնացված համագործակցության փորձ քույր քաղաքներ ձևաչափով եվրոպական մի շարք քաղաքների հետ (Գրենոբլ (Ֆրանսիա), Բրոդնիցա (Լեհաստան), Ավիլիանա (Իտալիա), Պրահա-Վինոր (Չեխիա) և այլն): Բացի այդ, վերջին տարիներին համայնքն ունի երաժշտական փառատոնների, սիմպոզիումների ու միջազգային արտ-ռեզիտենսների անցկացման հրաշալի փորձ:

2016 թվականից Սեւանը Սիսիանի, Դիլիջանի ու Գյումրի հետ միասին անդամակցել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ուսումնառող քաղաքների համաշխարհային ցանց»-ին, ինչը Սեւան համայնքին հնարավորություն է ընձեռվում օգտվել ցանցին անդամակցող այլ քաղաքների հետ տարբեր ոլորտներում (այդ թվում՝ մշակութային) համագործակցության յուրովի հարթակից:
Եվ ամենակարևորը, համայնքում ապրում են ակտիվ ու նախաձեռնող մարդիկ, ովքեր ամենօրյա մշակութահեն գործունեությամբ համայնքի մշակութային ապագայի իրական գրավականն են:
Այս ամենը աշխարհին ներկայացնելու ու զարգացնելու տեսանկյունից առանցքային նշանակություն ունի Սևանա լիճը քաղաքին կապող և միջպետական մայրուղու եզրով ձգվող շուրջ 17 հա տարածքով հանրային այգին, որը համայնքի բնակիչներն անվանել են «Երազանքի այգի»:
Այն հիանալի վայր է միջմշակութային հաղորդակցության բաց հարթակ դարձնելու տեսանկյունից և իր աշխարհագրական դիրքի, և չափերի, և համայնքապատկան լինելու, և բնակիչների կողմից սիրված տարածք, իսկ արվեստագետների համար ստեղծագործելու սիրված վայր լինելու շնորհիվ: Ռազմավարության մշակման ընթացքում միջազգային արտ ռեզիդենսի շրջանակներում համայնքային այգում հիմնվեց փոքրիկ անտառ՝ "Ապագա" բառի տեսքով՝ որպես ապագայի հանդեպ պատասխանատու վարքագծի օրինակ

ՄԶՌ նկարագրությունը

Ներածություն

ՄԶՌ մշակման աշխատանքներն իրականացվել են 2021թ-ի դեկտեմբերից 2022թ մայիսն ընկած ժամանակահատվածում, Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող EU4Culture ծրագրի շրջանակում՝ «Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի, Սևանի համայնքապետարանի, ««Սևան» երիտասարդական ակումբ» և «Նոր արվեստի փուլ» ՀԿ-ների կողմից: ՄԶՌ մշակման աշխատանքներում անգնահատելի է EU4Culture ծրագրի շրջանակներում տրամադրված փորձագիտական, մասնագիտական և ֆինանսական աջակցությունը: Ռազմավարության մշակման սկզբնական փուլում EU4Culture ծրագրի ազգային համակարգողն ու տեղական փորձագետները տրամադրել են արժեքավոր խորհրդատվություն ու անհրաժեշտ ուղեցույցեր: 2022թ-ի մարտին Երևանում EU4Culture ծրագրի շրջանակներում կայացած Վավերացման ազգային կոնֆերանսը բավական արդյունավետ էր՝ հատկապես փորձի փոխանակության տեսանկյունից:

Բացի այդ, միջազգային և ազգային փորձագետների, ազգային համակարգողի կողմից ներկայացրած զեկույցներն ու անհատական խորհրդատվությունները կարևոր էին ՄԶՌ մշակման աշխատանքների վերջնականացման տեսանկյունից: ՄԶՌ մշակման աշխատանքներում ներգրավված թիմը մայիսի 18-20-ը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսում մասնակցեց EU4CULTURE Տարածաշրջանային ցանցի առաջին համաժողովին: Համաժողովի ընթացքում Արևելյան գործընկեր անդամ երկրների ներկայացուցիչներին ներկայացվեց տարածաշրջանային ցանցի հայեցակարգը, ինչը շատ կարևոր է միջմշակութային հաղորդակցային ուղիների ստեղծման տեսանկյունից: Համաժողովի արդյունքում կապեր հաստատվեցին Արևելյան գործընկերության անդամ երկրների քաղաքների ներկայացուցիչների հետ՝ ձեռք բերելով պայմանավորվածություններ համագործակցության հետագա ձևաչափերի մշակման ուղղություններով:

Սևան համայնքի մշակութային զարգացման ռազմավարության մշակման աշխատանքներն իրականացվել են հստակ մշակված և ընտրված մեթոդաբանությամբ:

Համայնքի մշակութային արժեքները բացահայտելու և ներուժը գնահատելու համար իրականացվել է պատմամշակութային ժառանգության քարտեզագրում և բնակչության կարիքների գնահատում: Պատմամշակութային ժառանգությունն ավելի հասցեական և թիրախային դիտարկելու համար առանձնացվել են նյութական և ոչ նյութական ժառանգությունները, ինչպես նաև մարդկային ռեսուրսները:

ՄԶՌ մշակման մեթոդաբանական հիմքը առաջնային և երկրորդային տեղեկատվության հավաքագրման գործիքակազմի կիրառումն է: Առաջնային տեղեկատվության հավաքարման համար իրակացվել մշակութային ժառանգության արժեքների քարտեզագրում: Քարտեզագրման աշխատանքներն իրականացվել են երիտասարդների ներգրավմամբ, ինչի նպատակով նախապես իրականացվել է նրանց կարողությունների բարձրացում՝ լուսանկարչական, վլոգգինգի և ստորթելինգի դասընթացների (յուրաքաչյուրը 2-օրյա և 20-ական մասնակիցներով) միջոցով:

Երիտասարդները, ոլորտի լավագույն մասնագետների աջակցությամբ համապատասխան կարողություններ ու հմտություններ ձեռք բերելուց հետո, իրանացրել են մշակութային ժառանգության արժեքների քարտեզագրման աշխատանքները, որի արդյունքում ձևավորվել են ֆոտոտեսադարաններ, տեսադարաններ և պատմությունների շտեմարաններ՝ ներառելով Սևան համայնքի նյութական և ոչ նյութական արժեքները: Դրանք տեղադրվել են նաև Սևան համայնքապետարանի պաշտոնական կայքում: Երկրորդային տեղեկատվության հավաքագրման համար հիմք են ծառայել պաշտոնական աղբյուրների ուսումնասիրությունը, միջազգային կազմակերպությունների կողմից իրականացված վերլուծությունները, մասնագիտական գրականության, ոլորտային այլ նյութերի վերլուծությունը:

Առաջնային և երկրորդային տեղեկատվության հավաքագրումից հետո իրականացվել է այդ տեղեկատվության վերլուծություն՝ քանակական և որակական գործիքակազմի կիրառմամբ: Մասնավորապես, քանակական մեթոդների կիրառմամբ ներկայացվել է առաջնային և երկրորդային տեղեկատվության հիմնական իրավիճակային վերլուծություն, այդ թվում՝ զարգացման միտումներն ու կանխատեսումները, իսկ հետազոտության որակական մեթոդաբանական գործիքակազմով տրվել են կոնկրետ գնահատականներ ու մոտեցումներ՝ ինչպես գոյություն ունեցող, այնպես էլ ընթացիկ և կանխատեսվող իրավիճակների վերաբերյալ:

Նյութական ժառանգություն	Ոչ նյութական ժառանգություն	Մարդկային ռեսուրսներ
• Պատմամշակութային կոթողներ, • Եկեղեցիներ, հուշարձաններ • Բնական հուշարձաններ • Կառույցներ/շենք շինություն	• Խոհանոց • Երգ, երաժշտություն, նկարչություն, պար • Առասպելներ/լեգենդներ • Սովորույթներ, կենցաղավարություն	• Արվեստագետներ • Մշակույթի և հարակից ոլորտներում կրթություն ստացողներ; • Համայնքի բնակիչներ, որոնք հետաքրքրություն են ներկայացնում մշակութային տեսանկյունից:

Մշակութային զարգացման ռազմավարություն, որը բոլորինն է

Սևան համայնքի ՄԶՌ որակական ազդեցության գնահատման համար իրականացվել է SWOT վերլուծությունը՝ ինչը հնարավորություն է տալիս ստանալ իրավիճակային զարգացման համապարփակ և համեմատական պատկեր:
ՄԶՌ մշակման մեթոդական հենքը Սևան համայնքի բնակիչների կարիքների գնահատումն է, ինչը հնարավորություն է տալիս ապահովել ռազմավարության մշակման աշխատանքների կարևորագույն սկզբունքը՝ համայնքի բնակիչների մասնակցայնությունը: Ռազմավարության համար կարևոր անկյունաքար է այն, որ այն պետք է լինի համայնքի յուրաքանչյուր բնակչինը, հետևաբար, առաջին հերթին, ռազմավարության մշակման աշխատանքների համար ձևավորվեց 100-ից ավել շահակիցների հարթակ, որի անդամները, ֆոկուս-խմբային հանդիպումների, փորձագիտական հարցազրույցների, Town Hall քննարկումների ձևաչափերով ակտիվ մասնակցել են ՄԶՌ մշակման աշխատանքներում, որոնք ներկայացրել են Սեւան համայնքի բոլոր 12 բնակավայրերը:

2022 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում կազմակերպվել են 4 ֆոկուս-խմբային հանդիպումներ՝ ըստ հետևյալ թիրախային խմբերի՝

- Շահակիցների հանդիպում (բազմաշերտ խումբ՝ 23 մասնակից)
- Արվեստագետներ և արհեստի ոլորտի ներկայացուցիչների հետ հանդիպում (24 մասնակից)
- Պետական գերատեսչությունների ներկայացուցիչների հետ հանդիպում (10 մասնակից՝ ՏԻՄ, մարզպետարան, ԿԳՄՍՆ, Էկոնոմիկա, շրջակա միջավայր, բնապահպանություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների)
- Երիտասարդների հետ հանդիպում (10 մասնակից):

Ֆոկուս-խմբային հանդիպումների ընթացքում շահակիցների հետ քննարկվել է համայնքի մշակութային զարգացման հիմնական մոտեցումները, իրականացվել է ՄԶՌ տեսլականի և առաքելության ընտրությունը: Ֆոկուս-խմբային հանդիպումների արդյունքում առանձնացվել են 3 փորձագետներ, որոնց հետ իրականացվել են առանձին հարզազրույցներ՝ առավել խորքային մասնագիտական հարցեր ու դիրքորոշումներ քննարկելու համար: Փորձագիտական հարցազրույցներ են անցկացվել հայտնի քանդակագործ, խաչքարագործ Մուրադ Հովակիմյանի, երիտասարդ ճարտարապետ Հայկ Բաբայանի, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ներկայացուցիչ Վահագն Սարգսյանի հետ: Իսկ Town Hall երեք քննարկումներին մասնակցել են համայնքի 150 բնակիչներ, որոնց հետ վերլուծվել են ՄԶՌ առանձին բաղադրիչներն ու ռազմավարական նպատակները, ինչպես նաև ներկայացվել են յուրաքանչյուր նպատակից բխող գործողությունները: Հաշվի առնելով էկոլոգիական հիմնահարցերի կարևորությունը Սևան համայնքի մշակութային կյանքի զարգացման հարցում՝ ՄԶՌ մշակման աշխատանքների շրջանակներում իրականացվել է նաև «Էկոլոգիական արվեստ» միջազգային արտ ռեզիդենտ՝ 4 տեղացի և 2 օտարերկրյա արվետագետների մասնակցությամբ: Միջազգային արտ ռեզիդենտը նաև համայնքի մշակութային զարգացման տեսլականի յուրօրինակ վալիդացիա էր :

6 ամիս տևած և ամբողջ համայնքը համախմբած աշխատանքների արդյունքում մշակվել է Սևանի մշակութային զարգացման ռազմավարության փաստաթուղթը, որը դառնալու է նաև համայնքի հնգամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ:



Սևան համայնքի մշակույթի զարգացման SWOT վերլուծություն

S

- Աշխարհագրական դիրքն ու բնակլիմայական պայմանները,
- Ուժեղ կոնտրաստների առկայությունը տարբեր ոլորտներում՝ սկսած բնակլիմայական պայմաններից մինչև կենցաղավարում
- Համաշխարհային նշանակության, բացառիկ ու ֆենոմենալ հնագիտական ժառանգությունը,
- Երկրում զբոսաշրջային ամենաշատ այցելվող վայրերից մեկի՝ Սևանավանքի և Սևանի թեակղզու առկայությունը համայնքի տարածքում,
- Մշակութային արժեք ներկայացվող նյութական ու ոչ նյութական հարուստ ժառանգությունը,
- Փառատոնների, սիմպոզիումների, մեծ համերգների, գիտաժողովների, արտ-ռեզիտենսների իրականացման փորձը,
- Համայնքում ակտիվ աշխատող և մշակույթ ստեղծող մարդկանց առկայությունը,
- Համայնքի բնակիչների ակտիվությունը, ներգրավվածությունն ու նախաձեռնողականությունը:
- Տարբեր մշակույթների համերաշխ համակեցության պատմությունը,
- ՏԻՄ- ՔՀԿ համագործակցության առկայությունը, համատեղ ծրագրերի լուրջ փորձը,
- ԵՄ երկրներում քույր քաղաքների առկայությունը, ապակենտրոնացված համագործակցության փորձը այդ քաղաքների հետ
- Մշակութային ոլորտում գործող ուժեղ ՀԿ-ների առկայությունը և գործունեությունը համայնքում
- SS ոլորտի արագ թափով զարգացումը համայնքում

W

- Մշակութային կյանքի պասիվությունը,
- մշակութային ոլորտի անբավարար ֆինանսավորումը ՏԻՄ-ի կողմից,
- կրթության և մշակույթի միջև կապի գրեթե բացակայությունը,
- չգործող կամ վատ գործող մշակութային և հարակից ենթակառուցվածքները,
- համայնքապետարանի ու մշակութային գործիչների/ ոլորտը կարևորողների միջև համագործակցային հարթակի բացակայությունը:
- Մշակութային ոլոտի կառավարման հմտությունների պակասը պատասխանատուների մոտ:
- Մշակույթի կարևորության, մշակույթի միջոցով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունների մասին գիտակցության պակասը որոշում ընդունողների մոտ
- Սեփական բացառիկ պատմամշակութային ժառանգության ու դրա նշանակության մասին իրազեկության պակասը համայնքի բնակիչների շրջանում,
- Մշակույթի առևրայնացման հմտությունների ու կարողությունների պակասը համայնքում:

Սևան համայնքի մշակույթի զարգացման SWOT վերլուծություն

O

- համայնքի արմատներ ունեցող սյուռքահայերի, այդ թվում՝ հայտնի մշակութային գործիչների առկայությունը,
- համայնքի արմատներ ունեցող և երկրի գիտության և մշակույթի ոլորտում ակտիվ գործունեություն ծավալող մարդկանց մեծ թիվը,
- Սևանա լիճը՝ որպես հայտնի զբոսաշրջային կենտրոն/ բրենդ,
- Սևանա լիճը՝ որպես տարածաշրջանային նշանակության խմելու ջրի շտեմարան,
- քույր քաղաքների հետ հարաբերությունների ակտիվացումը,
- միջազգային փորձի տեղայնացմամբ՝ մշակութային կյանքի ակտիվացումը,
- Համայնքի հանդեպ հետաքրքրվածությունը մարզական ոլորտում (այս բնակլիմայական պայմաններում մարզվողները պոտենցիալ հաղթողներ են այլ վայրերում կազմակերպվող մրցումների ժամանակ)
- Լճաշենի հնավայրի նկատմամբ հետաքրքրությունը աշխարհի հնագետների շրջանում
- Մշակույթի առևտրայնացման հնավարությունների բացահայտումը համայնքում՝ հաշվի առնելով համանման համայքների միջազգային փորձի ուսումնասիրությունը,
- Մշակութային կյանքի ակտիվացման շնորհիվ համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավումն ու բնակչության կյանքի որակի բարձրացումը:

T

- Համայնքում հատկապես 44-օրյա պատերազմին հաջորդող տագնապայնության ալիքները,
- երկրում քաղաքական նոր ցնցումները,
- Ադրբեջանի կողմից ՀՀ սուվերեն տարածք ներխուժելու արդյունքում, այդ թվում՝ Գեղարքունիքի մարզում, անվտագնության երաշխիքների բացակայությունը,
- Մշակութային ոլորտի ազգային ռազմավարութուն բացակայություն,
- մշակութային օրենսդրական բացերն ու սահմանափակումները;
- Գլոբալիզացիայի պայմաններում որպես փոքր բաց տնտեսություն ունեցող երկիր ազգային ինքնության և մշակույթի կորուստը;
- Պետական մակարդակով մշակույթի հանդեպ անտարբերությունը:
-

Սեւան համայնքի մշակութային զարգացման հնարավորությունների վերլուծությունը SWOT գործիքի կիրառմամբ հնարավորություն է տվել համապարփակ գնահատականներ տալ՝ ներկայացնելով ինչպես ոլորտի ուժեղ և թույլ կողմերը, այնպես էլ զարգացման հնարավորություններն ու սպառնալիքները: Մշակութային ներուժի զարգացման տեսանկյունից համայնքում ուժեղ կողմ են դիտարկվել ինչպես բնական միջավայրն ու հարուստ պատմամշակութային ժառանգությունը, այնպես էլ համայնքում առկա մշակութային տարատեսակ իրադարձությունների փորձն ու մշակութաստեղծ մարդիկ ու կառույցները: Միևնույն ժամանակ, թույլ զարգացած կամ չգործող մշակութային ենթակառուցվածքներն ու պետական մակարդակով դրանց ուղղված ուշադրության պակասը մշակութային ոլորտի զարգացման թույլ կողմեր են: Այս ամենը զուգակցվում է ինչպես շահագրգիռ կողմերի անհրաժեշտ կարողությունների եւ ֆինանսավորման պակասով, ինչի պատճառ է դարձել համայնքի բնակիչների որոշակի անտարբերությունը առկա պատմամշակութային արժեքների նկատմամբ եւմ հետևաբար, դրանց առեւտրայնացման հնարավորությունների ոչ լիարժեք իրացումը:
Մյուս կողմից, համայնքն ունի մշակույթի զարգացման անգնահատելի հնարավորություններ՝ հաշվի առնելով հատկապես Սեւանա լճի կարեւորությունը, Լճաշենի հանդեպ միջազգային հետաքրքրությունն ու աշխարհագրական դիրքով պայմանավորված համայնքի հանդեպ մարզական ոլորտում հետաքրքրվածությունը: Հատկանշական է նաեւ միջազգային համագործակցության հնարավորությունների առկայությունը:

Մշակույթի զարգացման տեսանկյունից համայնքի համար իրականացվել է նաև միջազգային փորձի ուսումնասիրություն, որի ադապտացիան ոլորտային մի շարք խնդիրներ է լուծում: Մասնավորապես, Դուբլին քաղաքի օրինակով մշակութային զարգացումը փոխկապակցվել է տնտեսական, սոցիալական եւ բնապահպանական հենասյուներով: Լինզ քաղաքի օրինակը ցույց է տալիս բաց տարածքներում մշակութային կետերի ստեղծման հնարավորությունները համայնքում: Համայնքի մշակույթի զարգացման հնարավորությունների նպատակներն ու գործողությունները սահմանելիս դիտարկվել է նաև Բելգիայի Անթվերպ քաղաքի օրինակը, որտեղ հին շենքեր, չօգտագործվող շենքերը որպես մշակութային արժեք են վերափաթեթավորում: Հաշվի առնելով մշակույթի զարգացման սոցիալ-տնտեսական հնարավորությունները՝ Վարնայի օրինակով ոլորտի զարգացման ռազմավարությամբ նախասահմանվել է համանքի երկարաժամկետ զարգացումը՝ մարդկանց կյանքի որակի բարելավման սկզբունքով: Ուսումնասիրվել է Փիլզենի (Չեխիա) օրինակը, որտեղ առկա են մշակույթի զարգացման համագործակցության արդյունավետ մեխանիզմներ բոլոր շահակիցների միջև:
Բայցեւայնպես, մշակույթի զարգացման հարցում Սեվան համայնքում առկա են բավական լուրջ սպառնալիքներ: Հետպատերազմյան զարգացումները եւ նոր ռազմական գործողությունների վերսկսման սցենարները համայնքում տագնապայնության որոշակի մթնորոշ են ձեւավորել: Մյուս կողմից, ոլորտային օրենսդրական կարգավորման մեջ բավական լուրջ բացեր են, ընդհուպ մինչև մշակույթի ոլորտը կարգավորող ազգային ռազմավարության բացակայությունը:

Տեսլականը՝ Կայուն, պատասխանատու և ներառական մշակութային կյանքի առկայությունը համայնքում

Համայնքի զարգացման գործում մշակույթի կարևորությունն ընդգծելու համար ՄԶՌ-ի մեջ հիմնական տեսլական է սահմանվել կայուն, պատասխանատու և ներառական մշակութային կյանքի առկայությունը համայնքում: **Կայուն մշակութային կյանքն**, առաջին հերթին, կարևոր է մշակութային ոլորտի զարգացման շնորհիվ համայնքի սոցիալ-տնտեսական կյանքի ակտիվացման, ինչպես նաև դրա շարունակականության ապահովման տեսանկյունից: Մշակութային կյանքի վերաարտադրությունը և դրա շնորհիվ համայնքում սոցիալ-տնտեսական զարգացումը հիմնական ուղենիշներից է ռազմավարության մշակման աշխատանքներում: Հատկապես զարգացող երկրներում կայուն համայնքների առկայությունը ամրագրված է նաև որպես ԿԶՆ 11 նպատակ: Սևան համայնքում մշակույթը որպես գործիք նախատեսվում է ծառայեցնել բիզնեսի հնարավորություններ ստեղծելու, ինչպես նաև համայնքում կայուն հասարակություն և տնտեսություն կառուցելու համար:

Մյուս կողմից, հաշվի առնելով էկոլոգիական հիմնախնդիրներն ու դրանց առանցքային դերը համայնքում, մեծ նշանակություն ունի մշակույթի միջոցով **պատասխանատու հասարակության կերտման գործընթացը:** Սևանա լճի առկայությունը՝ որպես բառացիկ էկոհամակարգ, որպես տարածաշրջանային նշանակության խմելու ջրի շտեմարան, պարտավորեցնում են համայնքի հետ կապված բոլոր մակարդակներում որոշումների կայացման ժամանակ հաշվի առնել բնապահպանական բաղադրիչը և համայնքում ձևավորել շրջակա միջավայրի հետ համակեցության օրինակելի մշակույթ՝ սկսած կենցաղավարությունից մինչև տնտեսական գործունեություն, ինչը օրինակ կծառայի նաև այլ համայնքների համար:

Միևնույն ժամանակ, մշակույթի զարգացման հարցում մեծ դեր ունի դրա **ներառակությունը համայնքի** բոլոր բնակիչների համար: ՄԶՌ իրականացման շնորհիվ համայնքի յուրաքանչյուր բնակիչ (անկախ ազգության, բնակության վայրի, սեռի, ազգային կամ էթնիկական պատկանելիության, կրոնի, լեզվի կամ գրաված դիրքի) պետք է զգա մշակույթի դրական ազդեցությունն իր կյանքում: Մշակույթն անհրաժեշտ է դարձնել «շոշափելի» գործընթաց, որը համախմբում է համայնքը տարատեսակ մշակութային միջոցառումների ու իրադարձությունների շուրջ, ձևավորում է միասին երազելու, էկոհամայնք ունենալու գաղափարը, որի առաքելությունը համայնքում դառնում է բոլորինը:

ՄԶՌ առաքելությունը

ՄԶՌ հիմնական առաքելությունն է համայնքի մշակութային կարողությունների հզորացումը և դրա ծառայեցումը լուսավոր, մշակութահեն ու հանրահռչակված համայնք ստեղծելու համընդհանուր երազանքին՝ ի նպաստ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման և յուրաքանչյուր բնակչի բարեկեցության:

Ռազմավարական և առանձնահատուկ նպատակներ և գործողություններ

Ռազմավարական նպատակ 1. Առավելագույնս օգտագործել Սևան համայնքի մշակութային ներուժը՝ ի նպաստ համայնքի կայուն սոցիալ-տնտեսական զարգացման

Առանձնահատուկ նպատակ	Գործողություն
1.1 Բացահայտել Սևան համայնքի մշակութային ներուժը՝ նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության և առկա ռեսուրսների ամբողջական քարտեզագրման միջոցով:	1.1.1 Իրականացնել համայնք 11 բնակայավայրերի պատմամշակութային ժառանգության և նյութական ռեսուրսների ամբողջական քարտեզագրում: 1.1.2 Ստեղծել համայնքի ողջ տարածքում մշակութային գործունեություն ծավալող մարդկանց բազա՝ թիրախավորելով նրանց ըստ մշակութային գործունեության ոլորտի: 1.1.3 Բացահայտել բնակավայրերում ակտիվ, նախաձեռնող, փոփոխություն բերող և ազդեցիկ մարդկանց
1.2 Առավելագույնս առևտրայնացնել Սևանի պատմամշակութային ժառանգությունը՝ օգտագործելով բացահայտված ռեսուրսները	1.2.1 Մշակել և իրականացնել մշակույթի առևտրայնացման մեխանիզմներ 1.2.2 Ապահովել առևտրայնացման գործողությունների պլանի իրականացման մշտադիտարկում և գնահատում
1.3 Զարգացնել համայնքի կարողությունները մշակույթի առևտրայնացման և զբոսաշրջային ծառայությունների մատուցման ուղղությամբ	1.3.1 Համայնքում մշակութային գործունեություն ծավալող անհատների շրջանում իրականացնել մշակույթի առևտրայնացման թեմայով ուսուցումներ և վարպետության դասեր: 1.3.2 Մշակել և իրականացնել համայնքի բնակիչների՝ զբոսաշրջային ծառայությունների մատուցման կարողությունների ու հմտությունների զարգացման վերապատրաստման ծրագիր:

Ռազմավարական և առանձնահատուկ նպատակներ և գործողություններ

Ռազմավարական նպատակ 1. Առավելագույնս օգտագործել Սևան համայնքի մշակութային ներուժը՝ ի նպաստ համայնքի կայուն սոցիալ-տնտեսական զարգացման

Առանձնահատուկ նպատակ	Գործողություն
***1.4* Վերարժևորել, պահպանել և իրացնել համայնքի հարուստ ու բացառիկ հնագիտական ժառանգությունը՝ նորովի ներկայացման և հանրահռչակման միջոցով**	1.4.1 Մշակել և իրականացնել համայնքի հնագիտական ժառանգության վերարժևորման, պահպանման, նորովի ներկայացման՝ գիտականորեն հիմնավորված, գործնականում կիրառելի և հանրության կողմից ընդունելի հայեցակարգ: 1.4.2 Ստեղծել և տարածել մշակութային ժառանգությունը հանրահռչակող կոնտենտ (տեսանյութեր, կայք, ֆլայերներ, podcast-եր, փոստային բացիկներ, ցուցանակներ և այլն) 1.4.3 Մշակել և պարբերաբար իրականացնել ինտերակտիվ թատերական ներկայացում, որը հնարավորություն կտա զուգահեռ ներկայացնել հնագույն Էթիունյան և ուրարտական մշակույթները, կենցաղը, ռազմական գործը, խոհանոցը՝ ստեղծելով փորձարարական զբոսաշրջային դեսթինեյշն 1.4.4 Լճաշեն հնավայրի տարածքում թանգարանացնել առնվազն 1 դամբարաններ: 1.4.5Վերականգնողական AR տեխնոլոգիաների միջոցով իրականացնել կիկլոպյան ամրոցների 3D մոդելավորում: 1.4.6 Մշակել Լճաշենի երկրագիտական թանգարանի հայեցակարգը և կազմակերպել ցուցադրություններ՝ համայնքի կողմից արդեն իսկ սուբվենցիոն ծրագրով այդ նպատակի համար բարեկարգված տարածքում: 1.4.7 Ձևավորել ակտիվ համագործակցությունլ զբոսաշրջային ոլորտի ակտիվ դերակատարների հետ:

Ռազմավարական և առանձնահատուկ նպատակներ և գործողություններ

Ռազմավարական նպատակ 2. Սևանը դիրքավորել որպես մշակութային խաչմերուկ և միջմշակութային փոխգործակցության հարթակ

Առանձնահատուկ նպատակ	Գործողություն
2.1 Սևան համայնքը վերածել մշակութային և միջմշակութային իրադարձությունների և հաղորդակցության hub-ի	2.1.1 Բարելավել նվազագույն ենթակառուցվածքներ՝ մշակութային իրադարձությունների իրականացման և միջմշակութային հաղորդակցման համար 2.1.2 Մշակել համայնքի բոլոր բնակայավայրերը ներառող մշակութային իրադարձությունների (փառատոններ, սիմպոզիումներ, գիտաժողովներ) հայեցակարգ: 2.1.3 Մշակութային իրադարձությունների արդյունավետ և շարունակական կազմակերպման համար ստեղծել անհրաժեշտ նյութատեխնիկական բազա: 2.1.4 Անցկացնել մշակութային իրադարձությունների արդյունավետությանն ուղղված կարողությունների զարգացման վերապատրաստումներ: 2.1.5 Իրականացնել տեղական և միջազգային նշանակության մշակութային միջոցառումներ՝ 2.1.2 կետում մշակված հայեցակարգին համապատասխան: 2.1.6 Մշակել և իրականացնել Սևան համայնքի մշակութային կյանքի վերաբերյալ իրազեկման արշավ՝ բարձրացնելու մշակույթի կարևորության մասին համայնքի գիտակցումը և խթանելու մարդկանց մասնակցությունը մշակութային կյանքին: 2.1.7 Սևան քաղաքի հանրային այգու տարածքում ստեղծել շփման ու հաղորդակցման նորարար և ստեղծարար հարթակ՝ գլեմպերի օգնությամբ:
2.2 Մշակույթը դարձնել հասանելի և ներառական հարթակ Սևան համայնքի բոլոր բնակավայրերում	2.2.1 Ապահովել խոցելի խմբերի մասնակցայնությունն ու ներառականությունը համայնքի մշակութային իրադարձություններին: 2.2.2 Ստեղծել մոբիլ մշակույթի կենտրոն՝ համայնքի բոլոր բնակավայրերում մշակույթի հասանելիության ապահովման համար:
2.3 Ուժեղացնել համայնքի կարողությունները՝ մշակութային ոլորտի կառավարման և սույն ռազմավարության իրականացման արդյունավետության ապահովման նպատակով	2.3.1 Իրականացնել մշակութային ոլորտի կառավարման կարողությունների զարգացման դասընթաց ՏԻՄ աշխատակազմի համապատասխան աշխատակիցների համար: 2.3.2 Ձևավորել համագործակցության հարթակ ՏԻՄ-ի և մշակութային գործիչների միջև: 2.3.3 Ստեղծել “Մշակութային Սևան” հիմնադրամ՝ ծրագրի շրջանակներում ստեղծվող ռեսուրսների արդյունավետ կառավարման և դրանց կայունության ապահովման նպատակով:

Ռազմավարական և առանձնահատուկ նպատակներ և գործողություններ

Ռազմավարական նպատակ 3. Սևանը հանրահռչակել որպես էկոկենցաղավարման և էկոտնտեսավարման մշակույթի ձևավորման և արտահանման համայնք

Առանձնահատուկ նպատակ	Գործողություն
3.1 Խթանել էկոլոգիական բաղադրիչը որոշումների կայացման գործընթացում	3.1.1 Ստեղծել և գործարկել ՏԻՄ-ին կից էկոլոգիական խորհուրդ:
3.2 Ստեղծել Սևան համայնքում էկոզբոսաշրջության տարբեր ուղղությունների և հնարավորությունների միջավայրի ձևավորման և զարգացման հարթակ	3.2.1 Կազմակերպել էկոզբոսաշրջության թեմայով գիտական կոնֆերանս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հետ: 3.2.2 Մշակել և իրականացնել համայնքում էկոզբոսաշրջության հնարավորությունների զարգացման հայեցակարգ: 3.2.3 Մշակել և իրականացնել համայնքում ջրային և բարձրլեռնային գոտու սպորտաձևերի զարգացման հայեցակարգ: 3.2.4 Մշակել և ներդնել էկոզբոսաշրջության երթուղիներ:
3.3 Համայնքի բնակիչների և տնտեսվարողների մոտ ձևավորել էկոզգայուն վարքագիծ	3.3.1 Բարձրացնել էկոլոգիական թեմաների վերաբերյալ համայնքի բնակիչների և տնտեսվարողների մոտ գիտակցության աստիճանը: 3.3.2 Համագործակցելով բնապահպանական կազմակերպությունների հետ՝ իրականացնել էկոմշակույթին առնչվող միջոցառումներ կրթական հաստատություններում: 3.3.3 կազմակերպել և իրականացնել միջազգային Էկո-արտ-ռեզիդենսներ: 3.3.4 նկարահանել և տեղական ՏՎ-ով հեռարձակել, սոցիալական ցանցերով տարածել թիրախային սոցիալական գովազդներ

Իրականացման պլան

Սևան համայնքի մշակութային զարգացման ռազմավարությունը մշակվել է հինգ տարի ժամկետով և ներառվել է համայնքի 5-ամյա զարգացման ծրագրում:
Ստորև ներկայացվում է առաջիկա 2,5 տարվա գործողությունների ծրագիրը (այսուհետ տեքստում՝ ծրագիր), որի համաֆինանսավորման համար դիմում ենք EU4Culture-ի դրամաշնորհին:
Սույն ծրագիրն իրականացվելու է Սևան համայնքի ՏԻՄ-ի, գլխավոր հայտատու «Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի և համահայտատուներ «Սևան» երիտասարդական ակումբ և «Նոր արվեստի փուլ» ՀԿ-ների համատեղ ջանքերով՝ բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավմամբ: Քանի որ ռազմավարության մշակումն իրականցվել է աննախադեպ մասնակցայնության ապահովմամբ,ապա շահակիցներն ու թիրախային խմբերը արդեն իսկ պատրաստ են ոչ միայն ներգրավվելու ռազմավարության իրականացման պրոցեսներում, այլև ապահովելու են դրա իրականացման մշտադիտարկումը՝ համաձայն աշխատանքային պլանում սահմանված ժամանակացույցի և տրամաբանական կառուցվածքում սահմանված ցուցանիշների: Այդ նպատակով ռազմավարության մշակման փուլում ձևավորված շահակիցների հարթակում ընդգրկված անձանցից կստեղծվի մշտադիտարկման հանձնաժողով, որը եռամսյակային կտրվածքով բոլոր շահակիցներին կներկայացնի մշտադիտարկման զեկույց: Գնահատումը կիրականացվի արտաքին փորձագետի ներգրավմամբ, որի ծախսերը ներառված են ծրագրի բյուջեում:
Ռազմավարության իրականացման համար կձևավորվի պրոֆեսիոնալ և փորձառու աշխատակազմ, ինչպես նաև որոշակի պարտականություններ կստանձնեն ՏԻՄ աշխատակազմի համապատասխան աշխատակիցները: Յուրաքանչյուր աշխատակցի աշխատանքային նկարագրերն ու պարտականությունները հստակ կֆիքսվեն պայմանագրերում, որոնք կստորագրվեն ծրագրի իրականացման առաջին երկու շաբաթների ընթացքում: Իրականացման ընթացքում կներգրավվեն նաև փորձագիտական կառույցներ կամ անհատ փորձագետներ, ովքեր կընտրվեն մրցութային եղանակով՝ շեշտադրելով բարձր պրոֆեսիոնալիզմը և տվյալ ոլորտում գրանցած հաջողությունները:

Ծրագրի իրականացման հիմնական գործողությունները, ըստ առանձնահատուկ նպատակների, ներկայացնում ենք ստորև.

1. Ծրագրի առաջին ութ ամիսների ընթացքում կբացահայտվի և տեղեկատվական շտեմարանի տեսքով ՏԻՄ-ի կայքում հասանելի կդառնա համայնքի ամբողջ մշակութային ներուժը, որի առևտրայնացումը և հանրահռչակումը հետագա քայլերում կնպաստի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը և ճանաչելիության աճին: Համայնքի մշակութային ներուժի քարտեզագրումը արդեն իսկ սկսվել է ռազմավարության մշակման փուլում համայնքի երիտասարդների ներգրավման միջոցով, սակայն կարիք կա դրա առավել պրոֆեսիոնալ և ամբողջական իրականացման: Այս փուլում գործընթացում կներգրավվեն համալսարաններ և գիտական հաստատություններ, ինչպես նաև ԿԳՄՍ նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալությունը, ովքեր կապահովեն հետազոտության գիտական մասը, կտան տեղեկատվություն համայնքի տարածքում գոյություն ունեցող հուշարձանների մասին, կխթանեն ուսանողների մասնակցությունը հետազոտության դաշտային փուլին: Ծրագրի այս բաղադրիչի պատասխանատուն «Սևան» երիտասարդական ակումբն ու համայնքապետարանն են:

2. Մինչև 11-րդ ամսվա վերջ 1-ին կետի արդյունքների հիման վրա կմշակվի և կիրառության մեջ կդրվի համայնքի մշակութային ժառանգության առևտրայնացման քաղաքականություն՝ գործողությունների պլանով և մեխանիզմների նկարագրությամբ: Այդ նպատակով մրցութային եղանակով կընտրվի ուղեղային կենտրոն, ով կիրականացնի աշխատանքները: Քաղաքականությունը ՏԻՄ-ի կողմից ընդունվելուց հետո շահակիցներից փորձագետի ներգրավմամբ կձևավորվի մոնտիտորինգի հանձնաժողով՝ իրականացման ընթացը մշտադիտարկելու համար: Քաղաքականության մշակման համար պատասխանատու է ԼԻԴ կազմակերպությունը, իրականացման համար՝ համայնքապետարանը:

3. Ծրագրի առանձնահատուկ նպատակներից է Լճաշենի բացառիկ ու համաշխարհային նշանակության հնագիտական ժառանգության հանրայնացնումն ու առևտրայնացումը, ինչի համար նախ և առաջ անհրաժեշտ է.
3.1մշակել համայնքի հնագիտական ժառանգության վերարժևորման, պահպանման, նորովի ներկայացման՝ գիտականորեն հիմնավորված, գործնականում կիրառելի և հանրության կողմից ընդունելի հայեցակարգ: Այս նպատակով անհրաժեշտ է համագործակցել ինչպես գիտական հաստատությունների, այնպես էլ ոլորտը կարգավորող պետական գերատեսչության(ԿԳՄՍՆ) հետ, քանի որ Լճաշենի ժառանգությունը համաշխարհային նշանակության ազգային արժեք է և կարիք ունի պետության հատուկ ուշադրության: Այս նպատակով դեռևս 2021թ-ին համագործակցության քառակողմ հուշագիր է ստորագրվել ծրագրի լիդ կազմակերպության, ՏԻՄ-ի, ՀԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց թանգարանի միջև, համատեղ կազմակերպվել է «Լճաշենի ֆենոմենը» թեմայով 3-օրյա գիտաժողով Լճաշենում, որի ընթացքում նաև հարթակ է ստեղծվել համայնքի բնակիչների, գիտնականների, տեղական ու պետական կառավարման մարմինների երկխոսության համար, մասնակցային եղանակով մշակվել է Լճաշենի ժառանգության հանրայնացման և առևտրայնացման ճանապարհային քարտեզ, որը ևս ուսումնասիրվել է այս ռազմավարությունը մշակող փորձագիտական խմբի կողմից և ներառվել գործողություններում:
Կարևոր է, որ Լճաշենի հուշարձանի մասով հայեցակարգի մշակումը հանձնարարվի այնպիսի ուժեղ և գիտական ներուժով հաստատության, ինչպիսին «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց թանգարանն է՝ թե որպես հուշագրի կողմ, թե որպես հուշարձանի թանգարանացման և առևտրայնացման հաջողված փորձ ունեցող և ազդեցիկ կառույց: Փաստաթուղթը պատրաստ կլինի և կներկայացվի ավագանու հաստատմանը 2023-ի փետրվարին: Այն ենթադրում է մինչև 30 էջանոց փաստաթուղթ, որը կներառի հուշարձանի բնութագիրը, նրա պահպանության ու հանրահռչակման պլանը, հուշարձանի կապը տեղիաբնակների հետ, հուշարձանների առևտրայնացման հաջողված փորձի օրինակներ: Այս բաղադրիչի համար պատասխանատու է լիդը:

3.2 Մինչև 2023 թ-ի հունիսը նախատեսվում է ստեղծել և տարածել համայնքի մշակութային ժառանգությունը հանրահռչակող կոնտենտ (2տեսանյութեր, 1կայք, 20 հուշարձանների մասին պատմող ընդհանուր թվով 6000 podcast-եր, 20 տեղեկատվական և ուղղորդող ցուցանակներ հուշարձանների տարածքում)

3.3 Ստեղծել փորձառական զբոսաշրջային դեսթինեյշն՝ ինտերակտիվ թատերական ներկայացման տեսքով, որը հնարավորություն կտա այցելուներին մտնել դերի մեջ և փորձել հնագույն Էթիունյան և ուրարտական մշակույթները, կենցաղը, ռազմական գործը, խոհանոցը: Այն նախատեսվում է իրականացնել մեծ մասշտաբով, Լճաշենի դամբարանադաշտի կողքին գտնվող ստադիոնի տարածքում, որը կարողանում է տեղավորել 500 հանդիսատես: Ներկայացումը ունենալու էմիաժամանակ 60 մասնակից, որոնց մեջ 5-10-ը կլինեն հիմնական դերասաններ, իսկ մյուսները կլինեն հյուրերից և այցելուներից, ովքեր կհագնեն համապատասխան հանդերձանք և կմտնեն դերի մեջ: Սցենարաում թիրախավորվելու է պատմական այն պահը, երբ Ուրարտական թագավոր Արգիշտի 1-ինը հայտնվել է նախաուրարտական Էթիունի թագավորության մայրաքաղաք Լճաշենում(Իշտիկունի), ինչի մասին բնակավայրի կենտրոնում թողել է սեպագիր արձանագրություն: Այն հնարավորություն կտա միաժամանակ ցուցադրել 2 մշակույթ՝ ուրարտական և էթիունյան, համապատասխան մարտակառքերով, 3500 տարեկան լճաշենյան քառանիվ սայլով, իրարից շատ տարբեր զենք ու զրահով, հանդերձանքով, կենցաղի առարկաներով: Միջոցառման սցենարի և բեմականացման համար պայմանավորվածություններ են ձեռք բերված Հայաստանի լավագույն մասնագետների, մշակույթի ոլորտի հայտնի գործիչների հետ: Ներկայացումը պատրաստ կլինի մինչև 2023թ-ի հունիս ամիսը: Այն փորձնական և հանրահռչակելու նպատակով կիրականացվի 2023-ի հունիս-օգոստոս ամիսների ընթացքում մեկ անգամ, եռօրյա փառատոնի տեսքով, ապա որպես պրոդուկտ կփաթեթավորվի, կհանրահռչակվի, կվաճառվի և կիրականացվի 2024-ի հունիս-հոկտեմբեր ամիսներին՝ 3 անգամ: Ներկայացմանը զուգահեռ այդ օրերին Լճաշենում կիրականացվեն տարբեր էքսկուրսիաներ, վարպետաց դասեր, գիտաժողովներ՝ համաձայն 4.1 կետում մշակված հայեցակարգի:
Միջոցառումը կիրականացվի ՏԻՄ-ի և Լիդ կազմակեպության պատասխանատվությամբ, բոլոր գործընկեր ՀԿ-ների և շահակիցների, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության պետական կոմիտեի, ՀՀ ԿԳՄՍՆ նախարարության, «Փառատոնների ասոցիացիայի» ներգրավմամբ: Ներկայացման համար համապատասխան միջավայր ապահովող բոլոր պարագաներն ու հանդերձանքը կնախագծվի գիտական հենքի վրա՝ գտածոների կրկնօրինակներ, դրանց վրա եղած զարդանախշեր , որմնանկարներ և այլն: Դրանք կպատրաստվեն հայտնի և փորձառու վարպետների կողմից:
3.4 Լճաշենի հնավայրում թանգարանացնել առնվազն մեկ դամբարան: Այս գործողությունը նախատեսվում է իրականացնել մինչև 2023թ-ի հոկտեմբեր: Այն կբարձրացնի տարածքի զբոսաշրջային գրավչությունը, կփրկի պեղված դամբարանը, որը մոնումենտալ շինություն է, կորսյան վտանգից, կցուցադրի արքայական թաղման ծեսը՝ քառանիվ կառքերով ու աննախադեպ գույքակազմով, կապահովի միջավայր նաև 4.3 կետի համար, նախադեպ կդառնա նաև հետագայում մյուս դամբարանների թանգարանացման համար: Գործողության պատասխանատուն ԼԻԴ կազմակերպությունն է: Գործողությունը կիրականացվի ՀԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ համատեղ:
3.5 Ռազմավարությամբ նախատեսվում է իրականացնել Կիկլոպյան ամրոցների 3D մոդելավորում և վերականգնում AR տեխնոլոգիաների միջոցով՝ այս ծրագրի շրջանակներց դուրս, հաջորդ 2,5 տարվա ընթացքում:
3.6 2023 թ-ի հունիսից գործարկել Լճաշենի երկրագիտական թանգարանը: Այս նպատակով դեռևս 2021-ի նոյեմբերին պայմանագիր է ստորագրվել ՀՀ պետական Պատմության թանգարանի հետ, որտեղ պահվում են Լճաշենյան գտածոների 70%-ից ավելին: Պատմության թանգարանի կողմից կմշակվի ցուցադրության հայեցակարգ, կկահավորվի ՏԻՄ-ի կողմից արդեն սուբվենցիոն ծրագրով վերանորոգված 400 մ2 թանգարանային տարածքը և կիրականացվի ցուցադրություն: Պատասխանատու՝ ՏԻՄ, գործընկեր՝ ՏԶՀԿ, Պատմության թանգարան:
3.7 Ստղծված բոլոր պրոդուկտները վաճառելու համար կարևոր է զբոսաշրջային կազմակեպությունների հետ կապերի ակտիվացումը՝ ճանաչողական այցերի կազմակերպման և համատեղ փաթեթների մշակման միջոցով մինչև 2024 թ-ի փետրվարը: Գործողության պատասխանատուն «Սևան» երիտասարդական ակումբն է:

4. Ծրագրի իրականացման 5-րդ ամսից սկսած համայնքում կիրականացվեն մշակույթի առևտրայնացմանն ուղղված կարողությունների զարգացման դասընթացներ՝ 2-րդ կետում մշակված քաղաքականության իրականացմանն աջակցելու նպատակով: Դասընթացները նախատեսված են երկու տարբեր թիրախային խմբերի համար.
4.1մշակույթի և ստեղծարար ոլորտի ներկայացուցիչներ՝ ընդհանուր թվով 20 մարդ, ովքեր ծրագրի 5-10-րդ ամիսների ընթացքում կմասնակցեն 5-օրյա դասընթացի՝ մշակույթն ու ստեղծարար միտքը ապրանքի վերածելու, բրենդինգի և փաթեթավորման, մարքեթինգի և վաճառքի թեմաներով:
4.2 Զբոսաշրջության և հարակից ոլորտներում ծառայություն մատուցող կամ դրա պոտենցիալն ունեցող բնակիչների շրջանում (ընդհանուր թվով 150 մարդ) ծրագրի 11-րդ ամսվանից սկսած, յուրաքանչյուր 6 ամիսը մեկ (ծրագրի շրջանակներում 3 անգամ) կկազմակերպվի կարողությունների զարգացման 2 օրյա ուսուցումներ 4 թեմաներով՝ «Հյուրատնային գործ», «Սպասարկում», «Զբոսավարություն», «Զբոսաշրջային ծառայություններ և երթուղիների քարտեզագրում»:

5. Մշակութային զարգացում ապահովելու համար ռազմավարությամբ նախատեսված են անհրաժեշտ նյութական ենթակառուցվածքների բարելավումը, համայնքային այգու ցանկապատումն ու կանաչապատումը, որը վերածվելու է մշակութային բաց հարթակի:
Ենթակաուցվածքների բարելավման աշխատանքներ կիրականացվեն բոլոր 5 տարիներն՝ համայնքային բյուջեից: Դրանցից այս ծրագրի շրջանակներում կիրականացվի համայնքային այգու ցանկապատում, կապիտալ կվերանորոգվի և կկահավորվի մեկ մշակույթի տուն ՏԻՄ բոյջեից՝ ՀՀ կառավարության սուբվենցիոն ծրագրի շրջանակներում: «Սևան» երիտասարդական ակումբի կողմից համայնքում կկազմակերպվի դրամահավաք և կբարեկարգվի մեկ ճեմուղի, ամեն տարի կիրականացվեն կանաչապատման աշխատանքներ ՀԿ-ների կողմից: Այս գործողությունների պատասխանատուն ՏԻՄ-ն է, գործընկերը՝ «Սևան» երիտասարդական ակումբը;

6. Մինչև 2023 թ-ի դեկտեմբերը ընտրված փորձագիտական կառույցի կողմից կիրականացվի համայնքի բոլոր բնակավայրերը ներառող մշակութային միջոցառումների հայեցակարգ: Այն կհիմնվի նախնական հետազոտությունների, իրավական դաշտի ուսումնասիրության, բնակավայրերի՝ 1-ին կետի արդյունքում բացահայված մշակութային ներուժի ու մարդկային ռեսուրսների վրա: Հայեցակարգը պատրաստ կլինի և կներկայացվի ավագանու հաստատմանը 2023-ի դեկտեմբերին: Պատասխանատու՝ Լիդ կազմակերպություն, գործընկեր՝ «Սևան» երիտասարդական ակումբ, «Նոր արվեստի փուլ» ՀԿ

7. Բոլոր բնակավայրերում մշակութային միջոցառումների և փառատոնների շարունակական կազմակերպման համար կստեղծվի անհրաժեշտ նյութատեխնիկական բազա (ձայնային և լուսային տեխնիկա, հոսանքի գեներատոր, տաղավարներ, վրաններ, բիոզուգարաններ, աղբամաններ, սեղաններ և աթոռներ տաղավարների համար, շարժական ինֆոտնակ և հանդերձական, շարժական ցանկապատեր զոնայավորման համար): Ապրանքները ձեռք կբերվեն մինչև 2023 թ-ի հունիս ամիսը: Պատասխանատու՝ Լիդ, գործընկեր Սևան երակ

8. Անցկացնել մշակութային իրադարձությունների արդյունավետությանն ուղղված կարողությունների զարգացման վերապատրաստումներ 2023 թ-ի ապրիլին:
Վերապատրաստումների նպատակն է բնակավայրերի մշակութային թիմերում ներգրավված անձանց՝ ընդհանուր թվով 50 մարդ, կարողությունների զարգացումը՝ մշակութային իրադարձությունների կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու համար եւ պետք է ներառի ստեղծարարություն, իրադարձությունների կառավարում, ֆոնդահայթայթում, թիմբիլդինգ , հանրային արշավներ , ծրագիր գրելու հմտություններ թեմաները: Այն մեկամսյա ուսուցում է, որը նախատեսում է 2 անգամ 5-օրյա դեմառդեմ ուսուցում, իսկ դրանց միջեւ ընկած ժամանակահատվածում կիրականացվեն օնլայն վեբինարներ եւ վիդեոդասր: Պատասխանատու՝ «Սեւան» երակ, Նոր արվեստի փուլ:

9. Դասընթացի ընթացքում ձեռք բերած գիտելիքները գործնականում կիրառելու եւ ամրապնդելու համար մասնակից թիմերը կմշակեն միջոցառումների իրականացման նախագծեր, որոնք կներկայացնեն մրցույթի: Մասնագետների կողմից ձեւավորված հանձնաժողովը կընտրի 7 նախագիծ, որոնք կֆինանսավորվեն ծրագրի բյուջեից եւ կիրականացվեն մինչեւ 2024 թ-ի նոյեմբերը: Պատասխանատու՝ Սեւան երիտասարդական ակումբ ՀԿ , ՏԻՄ, ԼԻԴ կազմակերպություն:

10. 2023 թ-ի դեկտեմբերից Մշակել եւ իրականացնել Սեւան համայնքի մշակութային կյանքի վերաբերյալ իրազեկման արշավ՝ բարձրացնելու մշակույթի կարեւորության մասին համայնքի գիտակցումը եւ խթանելու մարդկանց մասնակցությունը մշակութային կյանքին: Պատասխանատու՝ Սեւան երիտասարդական ակումբ ՀԿ , համայնքապետարան

11. Սեւան քաղաքի հանրային այգու տարածքում ստեղծել շփման ու հաղորդակցման նորարար եւ ստեղծարար հարթակ ` 2 գլեմպերի օգնությամբ 2023-ի մայիսին: Դրանցից մեկը կդառնա co-working տարածք, մյուսը կծառայի ցուցահանդեսների եւ մշակութային վարպետաց դասերի կազմակերպման վայր: Պատասխանատու՝ Սեւան երիտասարդական ակումբ ՀԿ , գործընկեր ԼԻԴ, ՏԶՀԿ

12 Խոցելի խմբերի մասնակցայնությունն ու ներառականությունը համայնքի մշակութային իրադարձություններին ապահովելու համար կիրականացվի մարզի խոցելի խմբեեզարի քարտգրում եւ կմշակվի համայնքում ապրող խոցելի խմբերին մշակութային հասանելիութան ապահովման գործողությունների ծրագիր 2024թ-ի հունվար-մարտ ամիսներին: Պատասխանատու ՝ ՏԻՄ, գործընկեր ԼԻդ

13.Ստեղծել մոբիլ մշակույթի կենտրոն՝ համայնքի բոլոր բնակավայրերում մշակույթի հասանելիության ապահովման համար: Այդ նպատակով վերափոխել, նկարազարդել եւ հարմարեցնել ՏԻՄ-ի կողմից տրված ավտուբուսը, մշակել եւ իրականացնել գործողությունների պլան եւ ժամանակացույց: ժամկետները՝ մինչեւ 2024թ-ի հունիս: Պատասխանատու՝ "Մշակութային Սեւան" հիմնադրամ:

14. Իրականացնել մշակութային ոլորտի կառավարման կարողությունների զարգացման դասընթաց ՏԻՄ աշխատակազմի համապատասխան աշխատակիցների(ընդհանուր թվով 20 մասնակից) համար՝ 2023թ-ի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում:

15 Ստեղծել “Մշակութային Սեւան” հիմնադրամ՝ ծրագրի շրջանակներում ստեղծվող ռեսուրսների արդյունավետ կառավարման եւ դրանց կայունության ապահովման նպատակով՝ 2022թ-ի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում: Կանոնադրության մշակումն ու Հիմնադրամի գրանցումը կիրականացվի մասնագիտական կառույցի աջակցությամբ: Հոգաբարձուների խորհուրդը կընտրվի շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներից՝ ընդգրկելով նաեւ ծրագրի կոնսորցիումի անդամներին: Պատասպխանատու՝ Լիդ կազմակերպություն:

16. Համագործակցելով բնապահպանական կազմակերպությունների հետ՝ իրականացնել էկոմշակույթին առնչվող միջոցառումներ կրթական հաստատություններում: Մասնավորապես ՏԻՄ ի կողմից կմշակվի եւ կներդրվի բնապահպանական կրթության մոդուլներ եւ խաղեր համայնքի մանկապարտեզներում , ինչպես նաեւ դպրոցներում կստեղծվեն բնապահպանական/ կամ կանաչ վարքագիծ դաստիարակող ակումբներ 2024 թ-ի հունվարից: Պատասխանատու ՏԻՄ:

17. Կազմակերպել եւ իրականացնել միջազգային էկո-արտ-ռեզիդենսներ: Արվեստի Նոր Փուլ ՀԿ-ն կշարունակի անկացնել էկո Արտ ռեզիդեսնի հերթական փուլը , 2023 թվականի ապրիլ-մայիս ամիսներին: Պատասխանատու Արվեստի նոր փուլ ՀԿ :

18. Տեղական ռեսուրսներով ամբողջ ծրագրի ընթացքում պարբերաբար նկարահանել համայնքի մշակութային ռազմավարության իրագործման ընթացքը լուսաբանող թիրախային սոցիալական տեսանյուտեր , գովազդներ՝ սկսած ծրագրի մեկնարկից: Պատասխանատու ՏԻմ , գործընկեր “Մշակութային Սեւան” հիմնադրամ :

Հիմնասյուների ամփոփում

a) Բովանդակություն

Ընդհանուր առմամբ, Սևան համայնքի մշակութային զարգացման ռազմավարության, ռազմավարական և առանձնահատուկ նպատակների ու դրանցից բխող գործողությունների հիմքում ընկած փիլիսոփայությունն այն է, որ մշակույթը հնարավորություն է տալիս ապահովել համայնքում տնտեսական զարգացման յուրահատուկ եղանակ: Սևանի համայնքի պատմության տեղական ըմբռնումները և մեկնաբանությունները արտացոլում են անցյալի իրադարձությունները, որոնք սնվում են և մասամբ պայմանավորված են ներկաների պահանջներով, զգացմունքներով և շահերով: Սա առավել շատ է ընդգծում մշակույթի կարևորությունը համայնքի բարեկեցության ապահովման համար: Ուշադրություն դարձնելով և ընդգրկելով յուրահատուկ մշակութային արժեքներ, ավանդույթներ և հարակից գործոններ՝ կարելի է հասնել ավելի արդյունավետ զարգացման ջանքերի: Ամբողջ համայնքի մշակութային զարգացումը բոլոր բնակավայրերի և բնակիչների համար ինքնության զգացում է ապահովում: Այս ինքնությունը նպաստում է ընդհանուր ավանդույթների և արժեքների ձևավորմանը, որոնք բոլորն էլ առանցքային նշանակություն ունեն բարեկեցության բարելավմանն ուղղված գործողությունների պլանների բացահայտման համար: Մշակույթը նպաստում է տեղական ինքնության և համերաշխության զգացողության ձևավորմանը: Այն ազդում է գյուղական համայնքների վստահության վրա՝ միավորվելու կոնկրետ կարիքների և խնդիրների լուծման համար: Բնակիչների այս տեղական հանձնառությունը, անկախ տնտեսական պայմաններից, կարող է արժեքավոր գործիք ծառայել զարգացման տարբերակների և տեղական գործողությունների արդյունավետությունը ձևավորելու համար: Մշակույթի և ընդհանուր ինքնության վրա հիմնված նման հանձնառությունը կարող է դիտվել որպես ներուժային կարևոր գործիք տեղական ինքնակառավարման, զարգացման և սոցիալական բարելավման ջանքերի պահպանման համար: Այս ամենը կյանքի կոչելու համար կարևոր է ամբողջական քարտեզագրման միջոցով բացահայտել Սևան համայնքի մշակութային ներուժը: Ռազմավարության նպատակներն ու դրանցից բխող գործողությունները հիմք են հանդիսանում համայնքի հարուստ, դարավոր և բազմավեկտոր մշակութային ժառանգության ամբողջական քարտեզագրման համար՝ նրա ներուժը լիարժեք իրացնելու համար: Բացի նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության քարտեզագրումից, անհրաժեշտ է նաև ունենալ մշակութային գործունեության մեջ ներգրավված մարդկանց, ինչպես նաև ակտիվ, նախաձեռնող և փոփոխություններ բերող մարդկանց տվյալների շտեմարաններ, որոնց համար ՄԶՌ-ում նախատեսված է կարողությունների և հմտությունների զարգացման ամբողջական փաթեթ: Սևան համայնքի մշակութային ժառանգության ամբողջական քարտեզագրման արդյունքները հիմք են ռազմավարությամբ սահմանված առևտրայնացման մեխանիզմների ձեւավորման եւ ներդրման համար: Մրցութային կարգով ընտրված ուղեղային կենտրոնը կմշակի համայնքի մշակութային կարողությունների առևտրայնացման հայեցակարգ՝ հստակ գործիքների և գործողությունների ծրագրի միջոցով: Համայնքում մշակույթի առևտրայնացման ամբողջական փաթեթի մշակումից հետո, մշակված գործողությունների ծրագրի համաձայն, կիրացվեն համայնքում մշակույթի առևտրայնացման բոլոր հնարավորությունները: Մշակութային ժառանգության արժեքների քարտեզագրման և դրա առևտրայնացման հնարավորությունների բացահայտման արդյունքում մշակութային զարգացման ռազմավարությունը կծառայի մշակութային իրադարձությունների հայեցակարգերի մշակմանը և իրականացմանը: Մյուս կողմից, ռազմավարության նպատակները ենթադրում են մշակութային նվազագույն ենթակառուցվածքների առկայություն, որոնք կակտիվացնեն մշակութային կյանքը համայնքում: Այս շրջանակում Սևան համայնքի հանրային այգու տարածքը համալրելն անհրաժեշտ ենթակառուցվածքներով, մյուս կողմից՝ քաղաքապետարանի տրամադրած ավտոբուսի գործարկման միջոցով համայնքին մոբիլ մշակույթի գաղափարը ներդնելը թույլ է տալիս ապահովել նեռակական մշակույթ ունենալու տեսլականը: Որպես համայնքի մշակութային զարգացման տեսլականի հաջորդ առանցքային բաղադրիչ՝ կարևորվում է պատասխանատու հասարակության կերտման գործընթացը, որի իրականացման ռազմավարական նպատակն է հանրահռչակել Սևանը որպես էկոկենցաղավարման և էկոտնտեսավարման մշակույթի ձևավորման և արտահանման համայնք՝ ընդգծելով էկոտուրիզմի զարգացման և էկոգիտակցության բարձրացման հնարավորությունները: ՄԶՌ-ի հիմնական փիլիսոփայությունը հնարավորություն է տալիս իրականացնել հիմնական առաքելությունը՝ ստեղծելով մշակութահեն հասարակություն Սևան համայնքում կյանքի որակի բարձր մակարդակով:

Հիմնասյուների ամփոփում

b) Ցանցային համագործակցություն (ցանց)

Ռազմավարության մշակման ընթացքում մեծ ուշադրություն է դարձվել շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցության ապահովմանը, ինչը նաև հետաքրքրություն է ստեղծել նրանց մոտ՝ ներգրավվելու իրականացման փուլում: Ձևավորված շահակիցների հարթակում առկա են 100-ից ավել մասնակիցներ տարբեր ոլորտներից՝

- մասնավոր (սկսած ՏՏ-ից մինչև հանրային և առողջապահական ծառայությունների մատուցում, սննդի և բնամթերքի արտադրություն, զբոսաշրջություն և ստեղծարար արդյունաբերություն),
- հասարակական (ծրագրի կոնսուրցիում ներգրավված են 3 հասարակական կազմակերպություն, շահակիցների հարթակի անդամ են դարձել համայնքի բոլոր ՀԿ-ները, այդ թվում ազգային փոքրամասնությունների շահերի պաշտպանությամբ զբաղվող, բնապահպանական, երիտասարդական և այլն),
- կրթական (Թաունհոլ քննարկումներին մասնակցել են ներկայացուցիչներ համայնքի տարածքում գործող բոլոր ուսումնական հաստատություններից, ավելի քան 150 աշակերտ ներգրավվել է պիլոտային արտռեզիդենսի ընթացքում իրականացված անտառտնկման աշխատանքներին ու մշակույթի գործիչների կողմից իրականացված պրեզենտացիաներին),
- պետական և տեղական կառավարման մարմինների ներկայացուցիչներ (ՏԻՄ աշխատակազմ, ավագանու անդամներ, մարզպետարանի և 5 տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներ, որոնց շրջանում իրականացվել են նաև ֆոկուսխմբայն քննարկումներ),
- մշակույթի ոլորտի կազմակերպություններ և անհատ մշակութային գործիչներ, արվեստագետներ, համայնքի բնակիչներ, երիտասարդներ, ԶԼՄ ներկայացուցիչներ:

Այս բոլոր խմբերը համախմբվել են մեկ տեսլականի և առաքելության շուրջ և պատրաստակամ են իրենց ներուժը ծառայեցնել Սևան համայնքի մշակութային ռազմավարության իրականացմանը: Բացի այդ ռազմավարությամբ նախատեսված է հուշագրերի ստորագրում և հմատեղ գործողությունների իրականացում գիտական տարբեր հաստատությունների, բուհերի, պետական գերատեսչությունների և առանձին ոլորտային փորձագիտական կենտրոնների հետ: Լուրջ ջանքեր են ներդրվելու ՏԻՄ-մշակույթի գործիչներ- մասնավոր սեկտոր երկխոսության և համագործակցության ապահովման համար: Մյուս կողմից մշակութային ժառանգության քարտեզագրման սկզբնական փուլում, որը ևս իրականացվել է այս ռազմավարության մշակման ընթացքում, արդեն պարզ է, որ Սևան համայնքն ունի անհրաժեշտ մշակութային ներուժ և կարողություն՝ դառնալու միջմշակութային համագործակցության հարթակ և խաչմերուկ, ինչը դարձել է ռազմավարական նպատակ: Այս համատեքստում նվազագույն ենթակառուցվածքների բարելավումը և մշակութային միջոցառումների հայեցակարգի մշակումն ու իրականացումը կարևոր հիմք են դառնում Սևան համայնքի և Հայաստանի այլ համայնքների միջև հարաբերությունների կառուցման և փորձի փոխանակման տեսանկյունից: Համայնքում միջազգային տարբեր մշակութային միջոցառումների կազմակերպման ընթացքում ակտիվ համագործակցություն է նախատեսվում Հայաստանի այլ համայնքների, ինչպես նաև Արևելյան գործընկերության և ԵՄ անդամ երկրների քաղաքների հետ: Այս առումով շատ կարևոր է ոչ միայն համայնքի ապակենտրոնացված համագործակցության փորձը եվրապական տարբեր երկրներում ունեցած քուր քաղաքների հետ, այլև շատ օգտակար էր մայիսի 18-20-ը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում կայացած 1-ին տարածաշրջանային ցանցային համաժողովին մասնակցությունը, որի ընթացքում արդեն պայմանավորվածություններ են ձեռք բերվել Վրաստանի և Մոլդովայի մասնակից քաղաքների հետ մշակութային միջոցառումների համատեղ կազմակերպման և փորձի փոխանակման վերաբերյալ: Միջազգային համագործակցության ապահոման, փորձի և գիտելիքի փոխանակման և միջմշակութային հաղորդակցության լավագույն ձևերից է միաջազգային արտ-ռեզիդենսների իրականացումը, ինչը փորձարկումը ևս իրականացվել է ռազմավարության մշակման փուլում և որի շարունակական իրականացումը ներառված է ռազմավարական գործողություններում:

Հիմնասյուների ամփոփում

c) Կարողությունների զարգացում

Զարգացման համար մեծ կարևորություն ունի համայնքի և մշակույթի միջև կապի ապահովումը: Մարդիկ հավատարիմ են մնում այն ջանքերին ու արդյունքներին, որոնց հետ նրանք անմիջական կապ ունեն: Զարգացման ջանքերը, որոնք հաշվի են առնում կամ կենտրոնանում են մշակույթի վրա, մեխանիզմ են ապահովում տեղի բնակիչներին զարգացման գործընթացին կապելու համար: Նման ջանքերի շնորհիվ տեղի բնակիչները կարող են խրախուսել զարգացումը, որը պահպանում և խթանում է իրենց մշակույթը: Սա հատկապես կարևոր է մասնակցայնության, կամավորության և համայքային զարգացմանն ուղղված գործողությունների ապահովման տեսանկյունից: Զարգացման գործընթացում մշակույթի տեղը հասկանալու համար կարևոր է հաշվի առնել մշակույթի սոցիալական հիմքը, փոխազդեցության շրջանակը, ինչպես նաև զարգացման տեսակներն ու դրան նպաստող գործողությունները: Այս ամենի հիմքում առաջին հերթին համայնքի բնակիչների և շահագրգիռ կողմերի կարողությունների և հմտությունների զարգացումն է, որի ուղղությամբ ռազմավարությունը նախատեսում է մի շարք վերապատրաստումներ և վարպետության դասեր:

Դասընթացների թիրախային խմբերն են

- ՏԻՄ աշխատակիցներ ու ավագանին (Տրամաբանական շրջանակ, Output 2.2.3),
- Արվեստագետներ (Տրամաբանական շրջանակ, Output 1.3.1),
- Մշակութային առաջնորդներ (Տրամաբանական շրջանակ, Output 2.1.4),
- Զբոսաշրջային և հարակից ոլոտների բիզնես ծառայություն մատուցողներ (Տրամաբանական շրջանակ, Output 1.3.2)

Դասընթացի թեմաներն են՝ «Հյուրատների կառավարում», «Հաճախորդների սպասարկում», «Տուր փաթեթներ», «Զբոսաշրջություն», «Մշակութային ռազմավարություն», «Մշակութային ռեսուրսների կառավարում», «Մշակութային առաջնորդություն», «Թիմի կառավարում»:

Արդյունքում մասնակիցները կունենան նաև համապատասխան հմտություններ և կարողություններ՝ մասնակցելու EU4Culture-ի դրամաշնորհային մրցույթներին: Ռազմավարության մշակման փուլում արդեն իսկ սահմանվել է քարտեզագրում՝ համայնքի երիտասարդների շրջանում հմտությունների և կարողությունների զարգացման շնորհիվ: Միևնույն ժամանակ, կարևոր է նշել, որ կարողությունների զարգացման գործում ներգրավված են ինչպես համայնքապետարանի ծառայողները, մշակույթի գործիչները և երիտասարդները, այնպես էլ բիզնես ոլորտի ներկայացուցիչներ: Գործողությունների ծրագրով նախատեսված թիրախային խմբերի կարողությունների զարգացումը հնարավորություն կտա ստեղծել անհրաժեշտ պայմաններ և միջավայր ռազմավարական նպատակների իրականացման համար: Դասընթացի թեմաները կներառեն մշակութային ձեռներեցության և կառավարման ոլորտում կարողությունների զարգացումը և հմտությունների զարգացումը, ինչպես նաև ծրագրերի գնահատումն ու իրականացումը, և ամենակարևորը՝ Սևան համայնքում մշակույթի միջազգայնացումը:

Հիմնասյուների ամփոփում

d) Հանրային քաղաքականություն

Ընդհանուր առմամբ, Սևանի համայնքում առկա են մշակույթի զարգացման լայն հնարավորություններ զարգացման փոխհարաբերությունները հսկայական են: Այնուամենայնիվ, այս կարևոր ոլորտն ամբողջապես արտացոլված չէ համայնքի զարգացման քաղաքականության մեջ:
փոխհարաբերությանը հազվադեպ է նշանակալի դեր հատկացվում զարգացման ջանքերի նախագծման մեջ: Ազգային կարգավորման մակարդակի դեպքում Հայաստանը չունի մշակութային զարգացման համապարփակ ռազմավարություն: «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026թթ.)» մշակույթին վերաբերող հատվածը թույլ է և ոչ լիարժեք: Մշակույթը առաջնային դեր է խաղում երկրի կայուն զարգացման, մարդկանց հոգևոր կարիքները բավարարելու և նրանց երջանկացնելու, բարեկեցիկ և կրթված հասարակություն ձևավորելու, սոցիալական համախմբման ամրապնդման, ներառական համայնքների ստեղծման, ինչպես նաև ինքնության ձևավորման գործում: Կառավարության մշակութային քաղաքականությունը նպատակաուղղված է լինելու երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում մշակույթի դերի մեծացմանը, ընդլայնմանը, մշակութային կյանքին հասարակության մասնակցության և ակտիվ հաղորդակցության ապահովմանը, արվեստի տարածման և ժառանգության պահպանության գործում համայնքների ներգրավմանը, քաղաքացիական պատասխանատվության բարձրացմանը, ժառանգության վերաարժևորմանը: Զբոսաշրջության զարգացման հայեցակարգի վերլուծությունը ցույց է տալիս, որ այս երկու հարակից ոլորտների միջև կապ գրեթե չկա: Հայաստանում գործող քաղաքականությունների համեմատական գնահատումը ցույց է տալիս, որ մշակույթի զարգացման կանոնակարգերը, գործիքներն ու մեխանիզմը դեռևս լիովին մշակված չեն: Այս ռազմավարությունը առաջարկում է մշակել և իրականացնել մշակութային զարգացման մի քանի հայեցակարգ: Ռազմավարության իրականացման ընթացքում պատվիրակված ուղեղային կենտրոնը համակողմանիորեն կվերլուծի օրենսդրությունը և մշակույթի ներկայիս կարգավորումները՝ առաջարկելով համապատասխան փոփոխություններ տարածաշրջանային և ազգային մակարդակներում: Իսկ ազգային մակարդակի համար հիմնական առաջարկն է ունենալ Հայաստանի Մշակութային Զարգացման Ռազմավարություն, որտեղ կարտացոլվի խնդրի կարևորությունը:

Հիմնասյուների ամփոփում

e) *Հաղորդակցություն և տեղեկատվության տարածում (հանրայնացում)*

Սույն ՄԶՌ-ն վերաբերում է ռազմավարական նպատակների պլանավորմանն ու իրականացմանը՝ Սևան համայնքի եզակի մշակութային արժեքներն օգտագործելու համար՝ ի շահ համայնքի ընդհանուր տնտեսական և մշակութային շահի: Այս շրջանակներում հաղորդակցության և տեղեկատվության տարածման հենասյունը մշակույթը հասանելի է դարձնում. մարդիկ պետք է իմանան դրա մասին՝ մասնակցելու համար: Սեւան համայնքի զարգացման ռազմավարության կարեւորագույն նպատակներն ու գործունեությունը կապված են դրա տարածման հնարավորությունների հետ: Նախ՝ քարտեզագրված տվյալների բազաների հանրային հասանելիությունն ապահովելու նպատակով դրանք կցուցադրվեն ինչպես Սեւանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում, այնպես էլ Վիքիպեդիա Հայաստանի կայքում՝ եռալեզու ձևաչափով: Սևանը որպես միջմշակութային հարթակ և խաչմերուկ հանրահռչակելու նպատակով նախատեսվում է մշակել և իրականացնել Սևան համայնքի մշակութային կյանքի վերաբերյալ իրազեկման արշավ, բարձրացնել համայնքի իրազեկությունը մշակույթի կարևորության վերաբերյալ և խթանել մարդկանց մասնակցությունը մշակութային կյանքում: Համայնքի եզակի մշակութային ժառանգությունը և հասանելի ռեսուրսները (տեսանյութեր, կայքեր, թռուցիկներ, փոդքասթեր, բացիկներ, գովազդային վահանակներ և այլն) հանրահռչակող բովանդակություն ստեղծելու և տարածելու ռազմավարությունը նախանշում է կոնկրետ գործողություններ և դրանցից բխող միջոցառումներ: Համայնքային մշակույթի հանրայնացման օրինակը Լճաշենի հնավայրերում ինտերակտիվ թատերական ներկայացումների մշակումն ու իրականացումն է, որը հնարավորություն կտա ներկայացնելու հնագույն էթիունական և ուրարտական մշակույթները, կենսակերպը, զինվորական աշխատանքը, խոհանոցը, ստեղծելով փորձարարական զբոսաշրջային ուղղություն: